





նորն գաւառները պիտի կառավարեն :

(Ե-բրայ)

**ՄԱՃԱՌԻՍՏԱՆ :** Հոս տեղաց քաղաքական կառավարութիւնն ու բաժանումը նոր կերպարանք մը ընդունեցաւ : Հէյնո Սեպուհը երրորդ բանա-կին հրամանատարութենէ զատ նաեւ բոլոր Հուն-գարիայի գործադիր իշխանութիւնը ձեռքն ունի կամ որ նոյն է՝ հոն տեղաց կուսակալն է : քաղաք-կան բաներու համար իր քովը պիտի ըլլայ կայսեր կողմանէ խաւրուած վերին գործակալ մը : Բոլոր երկիրը զանազան ազգայնութեանց նայելով՝ այլ և այլ գաւառներու պիտի բաժնուի, որոնց ամէն մէ-կուն վրայ գործակալ կամ գաւառակալ մը պիտի գրուի :

— Նորերս պատերազմի պաշտօնէին տրուած հա-շուին նայելով, կայսերական զօրքը մաքառներուն ձեռքէն 660,151 հրացան, 2379 ատրճանակ, 216,000 սուր, 2073 նիզակ ու 560 թնդանթ առեր է :

(Ե-բրայ)

## Ե.Չ.Գ.Ե.Յ.Ի.Ն

— Սորաքոր-Լիւն վանդակի և Եփեսոսի, որք են ի ջրջակայն լինոյ ի Գաւառն Եփեսոսի կամ Եփեսոսի ան-նի, Հայաստան երկրի :

Հարանայ-Լիւն 1 :

Իսկ երկրորդն՝ ամբողջ, միայն գմբէթին կէսն ի վայր անկեալ է, որ կից ընդ որմով չորից սեանց վերայ կառուցեալ. ունի 15 զրայ երկայնութիւն, և 8 զրայ լայնութիւն. ունի եւս Գ. լուսամուտ. և Գ. խորան, և Բ. գուռն տրեւմտեան և հարաւ-ւային :

Ի ներքս անդ ի հիւսիսային յորմն գրեալ էր ար-ձանագրութիւնս այս :

Ը.Ա. Ժ. Հանուն աստուծոյ, ի Ոսկ. Թվական կանոնութեան : Ես տէր Մանուկ Նուստու յիսուսին ի վերակայուս եկեղեցւոյ՝ առաջնորդ գործով սուրբ ուխտիս, ոչ ըստ արժանութեան իմոյ կենացս կամ վարուց ինչ առաքիլութեան, այլ ի ներքին լի-տուծոյ ապաւինելով, ազատեցի մեծաւ ջանքիւ ըզ-հարկ և զթաւաթիւս. առի և զքեզագործի իւր ամե-նայն գոյն ի սուրբ ուխտս վստօն ապաւինի տեղի լինելոյ ի փախտեան ժամանակի, և այլ բազում ինչ աւգորի, փայտի և խոտի. արդ գուր սուրբ հարք և եղբարք, որք յաջորդէք զինի մեր, յիշատա-կի արժանի արարեք զմեզ սուրբ պատարագան, և այլ աղաւթից հանգիսին : Եւ որք յիշէք յիշեալ լիցիք ի մեծի յատենին առաջի Քրիստոսի. և որք զինի ձեր գան, զձեզ յիշեցեն. զոր և իմ անխա-փան եմ պահեալ զառաջնոց յիշատակն : Եւ տու-ողաց իմ պարգեւի Վազիկ էր աւհնեալ յաստու-ծոյ, և որքեակք իւր Սմբատ, և Բ.բատ, և Լ.շոտ, վրայութեամբ ամենայն Հայոց ազատացս : Եւ Բ. յամենայնի աւրհնեալ է սուրբ Նորորդութիւնն տուիչ ամենայն բարեաց :

Եւս վանքին արտաքոյ յարեւելեան յորմն ի յե-տոյս երկից խորանայն՝ ուրոյն ուրոյն զանուանս նո-ցա յատկացուցեալ էին գրելով : Ի յետոյսն աւագ խորանին գրեալ էին՝ սուրբ Հարութիւն : Եւ ձեռք

մեանն՝ սուրբ Լստուածածին : Եւ ահեակն՝ սուրբ Գրիգոր :

ԵԿԵՂԵՑԻ Ե.

Իսկ միւս վանքն՝ որ փոքր ինչ ի վեր կոչս քան զնա, և կառուցեալ յանուն քաջայայտ զօրակա-նին Քրիստոսի սրբոյն Վեորդայ. շինեցեալ և սա սեւադոյն քարամբ իբրեւ զմիւսն. և է ամբողջ ամենայն պարագայիւր, և հաստատեալ կից ընդ որմով ի վերայ չորից սեանց, և ի չորից կամարաց վերայ կաթողիկէն կանգնեցեալ : Ունի 10 լուսա-մուտ. Գ. ի գմբէթն. Գ. ի յեկեղեցւոյն. և Բ. յաջ և յահեակ խորանին : Կայ և սեղանի հաստատ : Եւս և յահեակն ունեւով զերկուս աւանդատու-նրս, որոց գրուներն են ընդ մեջ խորանին : Եւ յաջ-նութիւն եկեղեցւոյն՝ 17 զրայ և լայնութիւնն 11 : Եւ գուռն մի ի հարաւ :

Ի գրանս վերադոյն յորմն գրեալ էր արձանա-գիրս :

Ը.Բ. Հարցիւն աստուծոյ ես Սարտիրոս ետու-ղիմ կաղապար ի տիեզերահաշակ վանս Հոռոմոսի՝ վանս հոգւոյն Վեորդի որդւոյ իմոյ, և արձանագ-րեցի ի սուրբ Վեորդ. յամենայն ամի Գ. աւր ժամ Վեորդեայ զաւրաւարի. արդ և հինգաբարձ ուրբաթ և զարբաթ : Եւ յետ փոխելոյն իմոյ առ Քրիստոսն՝ ինձ առնեն : Եւ Բ. եթէ որ զննեցեալս որոշէ, կամ զգրեալս ոչ առնէ, որոշեցի ի փա-ռացն աստուծոյ :

Երեւմտեան լուսամտի յարտաքուստ վերի կող-ման յորմն նախապէս գրեցեալ էին այս ստորագ-րեալ երեքին թուականքս. և ապա արձանագիրս, այս են :

Ժ. Ռ.Ջ.Ժ.Ղ.Մ. ՄԿՂ. Եւ ի ՆԱ. ԹԱ. Զ.

Ը.Գ. Եւս Սմբատ Հահանշահ, որդի Վազկայ Հահանշահի ետու-ղիմ գեղոյ զահառուսին ի մեր հանգստարանս թագաւորաց ի տիեզերահաշակ վանսն Հոռոմոսի վանսն մեր մեղաց թաղութեան. և գրեցի ի սուրբ Վեորդ յամենայն տարի Գ. քա-ռասուրբ Վազկայ : Եւ ի վանքանիւ Բ. ինձ. և Բ. Վազկայ մինչ ի գաղութտ տեառն. վրայութե-Տ. Պետրոսի հայոց կաթողիկոսի. և յառաջնորդու-թեան սուրբ ուխտիս հաւր Սարգսի և Վեորդայ : Եւ Բ. եթէ յառաջնորդայ և ի սպասաւորաց սուրբ եկեղեցւոյն՝ զայս յիշատակս խափանէ, մեղաց մե-րոց պարտական է առաջի Քրիստոսի :

Եւ Բ. եթէ ի մեծաց կամ ի փոքունց, ի մերոց կամ յաւատարաց հախառակ կայ և յափշտակէ զգե-ղին, կամ արուն և փնդկաւն, զըկեալ լիցի առ ի Քրիստոսն. որպէս զլուրդ պատուածասպան որո-շեցի ի սուրբ Նորորդութեան. և ի Քրիստոսի սուրբ նշանէն կապեալ եղիցի կենաւ և մահ-ուամբ : Եւ ամենայն մեղք և անէծք լիցամայ մինչ ի գաղութտն Քրիստոսի ի նմանէ ինգրեցի հա-տատուն, եթէ Լստուած կամի : Ժ. Ռ.Ջ.Ժ.Գ. :

Ի յարեւելեան յորմն գրեալ էր :

Ը.Գ. Ու Հոգեւորդ գուռ և մեծանունը. ի վե-կոյս սուրբ Վեորդիս՝ աւգնեա բարեխաւսութե-Վազկայ Հահանշահի շինողի զվկայարանս զայս քոյք անուանակցութեամբ ի քոյք յուսացեալ բա-րեխաւսութիւն. զի ընկալցի զաղորմութիւն ի Քրի-ստոսէ աստուծոյ անվախձան յարքայութեան ընդ ամենայն արդարացեալսն ապաշխանեալ հասանել լուսոյ փառաց որդւոյն աստուծոյ ի վերջնութիւն գե-ղեքին ի ծագել մեծի և աներեկ առաւառտին այ-ցեւութիւն գտանել առաջի ահաւոր բեմին և ա-նապա գաւառորին՝ աղաւթմբ :

Իայն ի վանիցս յայտցանէ ընդ արեւելս կոչս 20 զրայի չափ հեռի փոքր մատուռն մի կայ, որ ի ներքուստ ամբողջ, բայց զարտաքին զերեսի քարին սըն քակեալ տարեալ են, որպէս և զմիւս վանիցն ի տեղիս տեղիս : Ունի 8 զրայ երկայնութիւն. և 4. լայնութիւն. և զերկուս լուսամուտս : Եւս տեղս անկարծիք երեւի յատկապէս գերեզմանա-տեղի գուր ի մայրաքաղաքին մեր յին թագաւոր-եալ արքայից և արքայադսնոյ, ըստ որում քարեւելի-ւով շինեցեալ մեծամեծ դամբարանք կան աստ, յորոց բազմաց զբարինսն քակեալ տարեալ են : Եւ տանոր մերձ ի սուրբ Վեորդայ վանս՝ տեսաք զմե-ծագոյն փառաւոր գերեզմանն թագաւորին մերոց Լ.շոտոյ, և ի վերայ գերեզմանաքարին գտաք զայս համառօտ արձանագրութիւնս. որ է՝

Ը.Բ. ՆԱ. Եւս Լ.շոտ թագաւորին է :

Փոքր ինչ ծանօթութիւն վանս արձանացն խո-շանեցայ :

Ի Հոռոմոսի սուրբ վանից քառորդ մի հեռի ի վերայ ճանապարհացն Լ.շոտ, կարսայ, և Հորե-կէլի ամենայն գիւղորդից (զի ոչ ունի այլ ճանա-պարհ, քանի հարկաւ աստի անցանէ և երթայ յո և կամեցի) յաղակողմն գոն երկու բարձրագոյն (իբրեւ զեանդին քեօշիւ) զոյք արձանք, շինեց-եալք քառանկիւնի, 6 զրայի չափ բացակայ ի միմ-եանց : Ի վերուստ զկամարս արկեալ առ անցանէ իբր ի կարմնի՝ ի գլուխս արձանացս հաստատեալ ի գմբէթաւոր փոքր սենեակն, Ի հարաւ կուսէ միոյն ի յստորեւն փոքր դրամբ մտեալ ընդ մեջ և 12 աստիճանաւ ելանէ ի վեր ի գլուխն հաստատ-եալ ի գմբէթաւոր սենեակն, և անտի ի վերայ կամարացն անցանի ի միւսն : Որք ունին մի մի լու-սամուտս : Օղջամանէ ասեն աւանդութեամբ մե-ծագոյն զանկ կախեցեալ գուր աստի, և պահպանք նստեալք. որք ի գաղութտն սրբազան կաթողիկո-սին ի սուրբ Լ.շոտի մեծաց ի սուրբ Հոգեւորդ վա-նրս, յայնժամ հնչեցուցանելով զանկ՝ աղբեն յին յաղակողմն թագաւորին և մեծամեծացն զգալուստ հայրապետին :

Կամ թէ պահպանքն նստէին աստ փոփոխակի՝ ի յղեւուցութիւն յանկարծազաս թշնամեացն : Ի գլխոց արձանացս աստի՝ ըստ որում երեւին առաջի աչաց ներկայապէս մայրաքաղաքն մեր Լ.շի և բոլոր գաւառք Հորեկէլի : Եւ աստի ի զոյք արձանացս առեալ՝ աղաղիք յորընջեալ կոչէին խօշալար, և ըզ սուրբ վանիցս և գիւղին խօշայ վանք :

Հաստորեւն յարտաքուստ ի հիւսիսային յորմն ա-նիմաստ թիւ մի կայր. որ է այս :

Ը.Բ. Եւս խաչատուրս գրեցի : Եւս քան առ այս բաւ համարեցի :

ԵԿԵՂԵՑԻ ԿԱՄ ՎԱՆԻ Զ.

ՅԱՂԱԳՍ ՂՕԶԼՈՒԺԱՅԻ ՎԱՆԻՑՆ

Ի Սայրաքաղաքէն մերմէ Լ.շոտ ժամ մի կամ քառորդ մի առաւելութեամբ ընդ արեւմուտն կոչ հոգեւորդ և գեղեցկաշէն վանք մի ի յստու-րոտ բարձր լեւինն ի բարձրագոյն տեղում ի տա-փարակ ձորամիջի Ղօղուճայ անուանեալ գեղին : Տաճարն հաստատ և անվնաս պահեալ. որ ի վե-րայ կից ընդ որմով չորից սեանց զբարձրագոյն կա-մարոն ունեւով զվայելաշէն կաթողիկէ գմբէթն ի վերայ գլխոյն պահեալ ունի : Եւ յայնութիւն Տաճարին 16 զրայ. և լայնութիւնն 10 : Ունի զվ-առք խորան մի միայն. և յաջ և յահեակ խորանիս զոյք աւանդատունս ի վերայ միմեանց : Եւ զեր-

լուն՝ մտքին պէս արտգ ու առատ են. արդիւնքնին քիչ ժամանակի մէջ հովի, ձայնի, ու լայնի պէս շատ տեղեր ու շատ մարդու կը տարածուին : Եւս համար ամեն աղբայ մէջ այս տեսակի գի-տութիւններուն զբարդղները՝ ուրիշ կարգ-արհեստաւորներուն թուոյն նայելով խիստ քիչ են. և ասկէ՝ աղբայ վնաս մին ալ ծագած չունի : Եւ երբ տեսնեք որ 35,000,000 գերմանացին ամէն 18,000 մատենագիր ունեն, որ 2000 հոգեին մէկ մատենագիր ըսել է, և տակաւին մէջ ալ ինկած է. որովհետեւ ասոր-ուան օրս՝ մարդ չի համարձակիր գեր-մանացիք տղէտ են կամ ծագիւնաւ աղբ մը չեն ըսելու : Իայց ինչ հարկ օտար սողաց վրայ օրինակներ փնտրելու : Եւ զի որ եկանք նէ Սիւրբարեանց պղծ-տի մէկ միւսքանութիւնն ալ բաւական եղաւ աղբերնուս գրականութիւնը նորէն ծագեցնելու : Եւ զի որ քանք, մէկ Հ. Արսէն մին ալ բաւական կը-նայ ըլլալ աղբերնիս քերական ու քեր-թող ընելու : Եւ զի որ քանք, երկու

Հիւրմիւղեանք ալ բաւական են աղ-բը հնագէտ ընելու : Եւ զի որ քանք, մէկ Հ. Սիւրբայէլ մին ալ բաւական է աղբին իր պատմութիւնը որովհե-տեւ : Եւ զի որ քանք, մէկ Լ.գեղ-մին ալ բաւական կըցաւ եղբը էր աղ-բին լեզուագիտութեանը առաջնորդ մը ըլլալու : Իայց աս խօսքերով ամեն-ին միտքս ըսել չէ թէ այս կարգ ան-ձանց թիւը պէտք է որ աղբին մէջ քիչ ըլլայ. վասն զի, այն ժամանակը՝ աղբին էն մեծ քարեայ չափը՝ սահ-մանի տակ առնելու, կամ քիչցունե-լու փոփոք մը ունեցած կ'ըլլայի : Կամ թէ աւելի որոշ կերպով խօսե-լով, այս կարգ անձանց վրայ խօսած ժամանակը՝ ըսել չեմ ուղեր թէ չափա-բերական հաշուով ասանկները պէտք է որ աղբին մէջ մէկ, երկուք, հինգ, տասը և այլն ըլլան, վասն զի ասանկնե-րուն թիւը որոշելու իշխանութիւնը մարդուս չէ տուած, բնութիւն իրեն միայն պահէր է, երբ և որչափ ալ ուզէ այնպէս կը գործածէ, և երբ որ

ալ հրամայելու կ'ըլլէ, ոչ աղբատու-թիւնը կընայ անոր դէմ կենալ և ոչ գիտարութիւնները : Սիւրբ թէ կը ցանկամ, որ ամէն ուսմունք տնտեսի չա-փով մը ու կարգով մը սորվողն ու աղբին մէջ տարածուին, որ ոչ քիչ ըլլան, ոչ շատ, ոչ ուշ և ոչ կանուխ. որով ամէն մարդ ընկերութեան մէջ իր տեղն ու յարգը գտնէ, ու ասանկ 10 տարի դպրոցներուն մէջ գրաւե-ղաններու վրայ խելք, միտք, աչք հոգեւորդն ու կեանքը մաշող տղան դուրս ելած ժամանակը ջրիկի (սա-խոյի) մը չափ վարձք չունենայ (թէ որ ալ գտնայ նէ) :

Իայց մասնաւոր կերպով խօսելով ձորտարարութեամբ ու հարուստ մար-դոց համար մի և նոյն բանը չենք կը-նար ըսել : Որչափ առաւել ասանկ թիւը եւեկնայ, որչափ առաւել ար-հեստներ ծագին, ու հարստութիւն տարածուի, այնչափ առաւել ալ գի-տուն մարդիկ յարգ կը գտնեն, ու սոր-ված գիտութիւնն իրենց ապրուստ ու

1 Հայաստան լրագրին 167 երրորդ թիւոյն մէջ իր կարգաւ հետեւեալ վեհանքն գործը :  
«Պ. Լամարքին ստակի նեղութիւնն ունենալուն ուր երկրորդն մէկ քանի ծախեալ կամք բեր-ն է. իսկ Գարդիլ ուսումնական թիւ չեն տուեր որ ուսանի երեւելի գիտական ու միակամայն աղբա-ն սեր անձ մը իւր ունեցած սապաւանքն զգու-ն ուստի իրենք ընկերագրութիւն մը ընելով խոյն-ն Պ. Լամարքին ծախքը երկրին արժողութեանը ու հաւասար ստակ հաւաքը ու իրեն ընտր բեր-ն են »  
Երկու հարկեր յիսուն տարիի չափ առաջ ալ վեհանքի վրայ որ վաճառականութեամբ խիստ ծաղ-կեալ երեւելի փողովուրդներուն մէկն էին, յանա-ծարք բանաստեղծին Վեհանքի վրայ գրած վեց սող ստանաւոր 6000 տուրքով տուին, (որ եթէ տակի էր, 45,000 զուռուշ կ'ընէր) : որովհետեւ շատ աղբոր չենք էր :

կուս գրուեն՝ զմին ի յարեւմտեան, որ ելանէ ընդ մէջ զանգաւատան կամ գաւթին. և զմինն ի հաւաքաւ, ընդ մէջ հարաւային գաւթին: Գմբեթն ունի չորս լուսամուտ: և Տաճարն գերիս: Կաւ ունի ի յարեւմտեան անկիւնն ի վերուստ գերիւս պահարանս գաղտնի ճանապարհաւ: Եւ յատակն բոլորովն քայքայեալ. զոր կոչուց և եղանց գոմն են արտեալ բնակիչք այլադէրն:

Ի հարաւային դրանս առաջն լեալ գաւթիս ի յարեւմտեան յորմն գրեալ էր:

Ա: ՈՅԹ: Ի յամս Լոտուածարեալ և մեծարու տեառն Սարգսի մարտաբաղարին Լեւոյ վերագրիտողի. և ի Պետական իշխանութեան Հանչաճ Գաւթարիայի եւ Պարսիմոյ որդի Հասանայ ոսիս մեծա նուն գեաւղին Լեւոյանոյ, միաբանեցայ սուրբ ուխտիս. և ետու զիմ հայրենի զայրին զվարդեն ցըն, որք ի սուրբ Լոտուածարին, ի ձեռն բարե սէր հաւր Սիմէանի և սուրբ եղբայրութեան յիշատակ հոգւոյ իմոյ: Եւ սորա փոխարէն հասուցին ինձ զաւր յարութեան Վաղարու բոլոր գեղեղեցիքս պատարագել զՔրիստոս. Ե. Պարսիմոյ: Ե. Խաւր գին: Դ. Սեդային: Որք հաստատուն պահեն աւերհ նին յԼոտուածոյ. և որք խափանեն նորին ի Քնէ: Գարձեալ գրեալ էր ի յատուկ սորա:

Բ: Եւ Սարգսի միաբանեցայ սրբոցս յետին պաւրսնին, և ետուն ինձ աւր մին Պատարագ գնափոխ: Եւ Սերոբ որդի Ռատինի բեւանեցի ետու զիմ այգին, որ ի ձոր դրանն է, ի սուրբ ուխտս. և պարտին սպասաւորք սորա ի տարին չորս աւր պատարագել զՔրիստոս յանուն Սերոբին:

Ի հարաւային դրան վերն գրեալ էր այս արձաւ նազիրս:

Գ: Թ. ՆԱԶ: . . . Տիկնութիւն խաթուն . . . բարեպաշտ իշխանին . . . ետու զիմ գանձագին հայրենիքն իմոյ գովածոր է. ի հնգեակէ մինն աւաղտեալ և բաժանեալ սահմանաւն. այլ և այլ ի հրեշտակաբնակ սուրբ ուխտս ի բազմայրս յաղաքս յիշատակողք մերոց, և սնգրանկին մերոյ Սասնային, որ կիսաւր փոխեցաւ և սուգ մեծ եթող ծնողաց իւրոց. որոյ յիշատակ շինեցի . . . սինն ի վերայ տապանատանս. սպասաւորք սուրբ Լոտուածածնին աստուածասէր հայր Սիմէան և այլ սուրբ եղբայրքս յանձն առին ամէն ամի իս. աւր Պատարագ առնել զՔրիստոս. Ի. աւր խաթունին. Ժ. Խաւրասին: Ժ. Սասնային: Լեւոյանոյ մինչեւ շնորհուած որդւոյն Լոտուածոյ. եթէ ի մեծաց կամ ի փոքունց՝ զմեր ընծայքս հանէ ի սուրբ ուխտս, եթէ Լեւոյանոյ զմեր ժամն խափանէ, մեղաց մեւրոց պարտական լիցի առաջն Լոտուածոյ, կատարելք գրիս աւրհնին յԼոտուածոյ:

Եւ ի հարաւակողման գաւթիս ի վերայ մեծա մեծ երկոց սեանց կամարապարկ կառուցեալ. մի կողմ մընոր ընդ որմովն Տաճարիս կից է, ամբողջ միացեալ է. իսկ միւս կողմն հիմնադրատակ եղեալ է այժմ:

ԵԿԵՂԵՑԻ. Ե:

Ի մէջ այս գաւթիս ի յարեւելեան գրուին գոյ մեծ գոռն մի, յորմն մտանէ յայլ գմբեթայարկ ի կեղեցի մի ի վերայ կից ընդ որմով չորկոց սեանց կամարակալ և չքնաղակերտ կառուցեալ. որ ունի սեղան մի և 3 լուսամուտ. և 3 լուսամուտ ի գմբեթն. և զերկայնութիւնս 9 զայ և լայնութիւն 5. և է ամբողջ բոլորովն. բայց միայն ի հարաւային որմն չորս կարգ քարինք անկեալ են ի ներքուստ: Եւ սա ևս ունի զյատուկ գաւթիս ամբողջ ի հիւսիսակողմն կից ընդ որմովն միւս մայր

Տաճարին: Ի վերայ սեանցն զգաղտնի խաչա քան գաւթալ ունի. երկայնութիւն սորա է՝ 16 և կէս զայ. և լայնութիւնն 14. և գոռն մի ընդ արեւմուտս: Որ լեալ է այժմ հողով և աղբով շէնարաց: Եւ տաճարիս դրան վերն կողման գրեալ էր այս արձանագրութիւնս:

Դ: ԵՂԻ: Թ. Վ: Եւ Վաղար մեղուցեալ աղա խին Քրիստոսի շինեցի զԵկեղեցիս զսուրբ Գրգորի, յիշատակ որդի ունի Վրիգորոյ ի ձեռն հաւր . . . և մաւրն (ա) և առաջնորդ սուրբ ուխտիս. . . և այն կտորած էր քարն:

Ի վերն կոյս այս գրանս յորմն քանդակեալ էին Գ. գեղեցիկ խաչք, և ի վերայ խաչիցն գրեալք էին:

Ե: Եւ Նորհիւն Լոտուածոյ եւ Խաւրաս որդի Սասնային ի մեր թմին ՆժԵ սեպհական սուրբ ուխտին բզեքի սուրբ Լոտուածածնին զմեր գանձագին ջրհորի կաննն իւր սահմանաւն, ջրաղացովն և պահիգանաւն և զայն աղբերն, զպահեղն, որ իմ պապն գնեալ էր և ինձ տուեալ. եւ յիմ կենդաւնութեանս ետու ի փանքն. և հայր Լեւոյանոյ և այլ սուրբ եղբայրքն փոխարէն հասուցին ինձ ի տարին՝ Ժ. աւր պատարագ յետ երկոց իմոյ ինձ առնեն, ով և իցէ՝ որ մեր արձանագիրս յետ չըջէ կամ յայլոց կամ յաւատարաց, մեղաց մերոց պարտական եղիցի առաջն Լոտուածոյ, քերդափէ:

Յաջակողմն այս արձանագրութեանս գրեալ էր: ԶԺԱ: Ի կաման Լոտուածոյ եւ Խաւրաս մեծի Խաւրասին թուոն Սասնի որդիս, իմ անդրանիկ որդին Սասնայն, որ կէս տարեկան ի Քրիստոս փոխեցի, իմ գանձագին հերեմեցն աշխուժ. որ իմ պապն գնեալ էր ուսիկելով յիս տուեալ ինչ, իմ պապն մեւաւ. եւ Խաւրաս իմ կնոջն զաւճիւնքն աին ու մորգարիտ իմ պարսնին տուի Հանչաճի ու կրկին գաւթնակ գնեցի ու զիմ որդւոյն բաժինն զՍասնին ի բզեքս տուի Լոտուածածնին, զվերի եզին իւր հնձանովն. Բ. շինական զմե հրեւանուղ Խաչատուր գուրուսին փեսայն իւրեանց հողովն և ջրովն ի տեղին ջրաղարջն զիմ խոտահարն՝ Զ. բարդ խոտի տեղ, որ վանքս հնձէ. մէկ սկի արձալթի եւ Խաւրաս զայս ընծայ տուի սուրբ Լոտուածածնին: Ով այս գրեցոյս հաւառակ կայ, ի Քրիստոսի հըրապարակին Լոտուածամայրս լինի իւրն գառախող: Իս տէր Սարգիս և հայր Լեւոյանոյ, Յուսէփ փափակալ, և այլ միաբանքս հաստատուցին ի տարին (Ժ) աւր պատարագ. Ե. Սասնին. Ե. Խաւրասայ: Ի Ով որ զարձանագիրս խափանէ, ՅԺԸ իցն հոգւով և մարմնով: Եւ որ հաստատ պահեն, աւրհնեալ եղիցին յԼոտուածոյ ամէն: ԶՍիմէան պառնող յիշեցէք աղաչեմ:

Եւ տաճարիս յետոյն արտաքուստ ընդ արեւելս՝ իւր կից ընդ որմով խորանին գոյ հրաշալի գամբարան մի սրբոյ միոյ անգիր, ի յանկիւնս ինչ տուն այլադէոյ. զորմէ վկայեցին բնակիչ այլադէրք զգաղտնի բժշկութիւնս և զքանդակիս կատարել հիւանդաց և ցաւագարացն: Պիտի շարունակութիւն:

ԱՌԵՒՏՐԵԿԱՆ

ՊՕԼԻՍ 5 ՆՈՅԵՄԲԵՐ 1849

ՕՏԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ԿՏԱՆԵԿԵՐ

| Լաթը  | Տեսակը     | Եառաջ | Լիւր | Գինը      |
|-------|------------|-------|------|-----------|
| 1 1/2 | Սիւրահի. Պ | 17    | . .  | 14—14 1/2 |
| "     | "          | 20    | . .  | 16        |

| Լաթը   | Տեսակը                         | Եառաջ   | Լիւր   | Գինը          |
|--------|--------------------------------|---------|--------|---------------|
| 1 1/2  | Սալաչի. "                      | 20      | . .    | 19—20         |
| 1 1/4  | "                              | 20      | . .    | 24 1/2—25 1/2 |
| 2      | "                              | 20      | . .    | 32—32 1/2     |
| 1 1/2  | Սեւմեւ. "                      | 20      | . .    | 26—27         |
| 1 1/4  | "                              | 20      | . .    | 33—33 1/2     |
| 1 1/4  | Չափալը թիւ 4                   | 24      | . .    | 23—24         |
| 1 1/2  | "                              | "       | "      | 26            |
| 1 1/4  | "                              | "       | "      | 30—31         |
| 1 1/2  | Սաքա                           | Թ       | "      | 4 1/2 20—21   |
| "      | "                              | "       | "      | 6 28—30       |
| "      | "                              | "       | "      | 6 1/2 32—33   |
| "      | "                              | "       | "      | 7 37—40       |
| "      | "                              | "       | "      | 7 1/2 42—45   |
| 1 1/4  | Լեւորիքան                      | 36      | 6 1/2  | 30—32         |
| "      | "                              | "       | 8 1/2  | 38—42         |
| "      | "                              | "       | 9      | 43—44         |
| "      | "                              | "       | 9 1/4  | 44—46         |
| 1 1/4  | "                              | "       | 11 1/2 | 56—58         |
| "      | "                              | "       | 12 1/4 | 58—61         |
| "      | "                              | "       | 13     | 63—64         |
| 1 1/4  | "                              | 29 1/2  | 12 1/2 | 62            |
| " 1/4  | "                              | "       | 13 1/2 | 63—64         |
| 2      | "                              | 9 1/2   | 14 1/2 | 69—70         |
| 1 1/2  | Խամ մատմբօլ                    | 40      | . .    | 48—49         |
| "      | Ներմակ                         | 40      | . .    | 55—60         |
| "      | Պջալը                          | 40      | . .    | 49—52         |
| 1 1/4  | "                              | նեղ 4   | . .    | 27—28         |
| 7/4    | Տիկնութիւն պոյ. (անդէն) ետուան | 78 1/2  | 82     |               |
| 1 1/16 | "                              | ճանր    | "      | 110 " 115     |
| 1 1/4  | Չիֆտէ պաղէ                     | 24      | . .    | 49—50         |
| "      | Թեք                            | "       | . .    | 25—25 1/2     |
| "      | Խամ                            | "       | . .    | 26—26 1/2     |
| "      | Չիֆտէ պոյ.                     | "       | . .    | 65—66         |
| 1 1/2  | Քալիքթ                         | 40      | . .    | 50—55         |
| 1 1/4  | Խասայ                          | 37      | . .    | 60—70         |
| 1 1/4  | "                              | "       | . .    | 65—75         |
| 1 1/4  | Թեք բաթիւպայ                   | 12      | . .    | 30—34         |
| "      | "                              | թիւ 1/4 | . .    | 40—43         |
| 2 1/8  | Չիֆտէ                          | 24      | . .    | 43—45         |
| 7/5    | Թուռուռնու պաս.                | 28      | . .    | 35—36         |
| "      | Խաթիլերտ                       | "       | . .    | 38—40         |
| 1 1/4  | Թեքիլթ թիւ 1/8                 | 20      | . .    | 38—40         |
| 1 1/2  | "                              | "       | . .    | 42—44         |
| 1 1/4  | "                              | "       | . .    | 46—48         |
| "      | Սաքալիլը                       | 6       | "      | 65—70         |
| "      | "                              | 40      | "      | 80—110        |
| 1 1/4  | Չիֆտայիլ շալ                   | 3 1/4   | . .    | 22—22 1/2     |
| "      | "                              | խամ     | . .    | 17—18         |
| "      | Չալ. թուռուռն.                 | "       | . .    | { 11—13       |
| "      | Խաթիլերտ առմալը                | "       | . .    | 14            |
| "      | Խաս արմալը                     | "       | . .    | 12            |
| "      | Խամ                            | "       | . .    | 16—17         |
| "      | Խաթիլ. տալ. խոշոր              | "       | . .    | 13—14         |
| "      | "                              | մանր    | . .    | 30—31         |
| "      | Սանգրաճ վերլէլ                 | 10      | . .    | 18—19         |
| "      | Կարմիր եօղլու լիփս             | "       | . .    | 16—18         |
| "      | Ներմակ                         | "       | ճանր   | 12—13         |
| "      | "                              | "       | փար    | 18—20         |
| "      | Կան. կար. տալ.                 | "       | . .    | 12—14         |
| "      | Ներմակ եօղլու փար              | "       | . .    | 137—148       |
| 1 1/4  | Սոֆ                            | թօփը    | . .    | 170—175       |
| 1 1/4  | "                              | "       | . .    |               |

նէ, այն աշխատութիւնն ոչ իրենց շահ մը կ'ունենայ ոչ ուրիշին: Եւ ծիւ ճշմարտութիւնը թէպէտ ամէն տեղ՝ բայց մասնաւորապէս մեր աղբին մէջ զգալն օրինակներով աղէկ հաստատուած է: Եւրոպեալ, որչափ որ աղբին մէջ իրենց մտաւորական տաւ զանգով փառաւորող մարդիկ ելան նէ, գրեթէ անոնց ամէն մէկին քով ալ մէկ մէկ օգնական վեհ անձինք եւ զան, որ ունեցած հարստութիւնն ինքն ստակ ժողովուրդ կամ անցաւոր վաճառական գործիք ընկեր տեղերնին, իմաստութեան ու գիտութեան հըրաւիրակ ընելով՝ գիրքեր տպել տուին, եկեղեցիներ կանգնեցին, դպրոցներ բացին, որքեր ու աղքատներ կրթեցին, մէկ խօսքով իրենց աղբայինները առ Լոտուած, առ հայրենիս և առ մարդիկ ունեցած պարտքերնն ճանչնալու ճամբան մոցուցին: Հարուստ մարդիկ ինկած աղբի մը մէջ իրաւամբ ճրագներու նմանեցուցեր են, քանի որ անոնց թիւը շատ ըլլայ, այն

չափ աւելի աղբը շուտով կը լուսաւորի ու ծաղկելու ճամբուն մէջ աւազով կը քայլէ:

Ուստի երբ որ կը տեսնանք որ վերայիցեալ ազնուամիտ անձանց հախաւակ, որ մէկն ալ իրենց փափկութիւնը աղբին կարօտութեան վեր կը դասեն, իրենց՝ ու իրենց մէկ երկու որդւոցը երջանկութիւնը աղբային ընդհանուր երջանկութեան նախապատիւ կը սեպեն, արձաթիւն բարեգործութեան գործիք մը ընելու տեղերնին, մասնութեան, վրէժխնդրութեան, զեղխութեան և ուրիշ մեղքերու գործիք լինեն, ասանկ ցաւալի օրինակներ տեսած ժամանակնիս կ'ըսեմ, պէտք չէ կարծել թէ այն մարդիկ իրենց արձատարութեան գէշ եղբեր են, իրենց վաճառականութիւնը, սեղանաւորութիւնը կամ հարուստ ըլլալն ինքն պատճառ եղբեր է անոնց գէշութեանը, ուր, թէ որ ասոնք բանաստեղծ, պատմաբան, հետաքննող կամ աստեղծ էտ ըլլային՝ բոլորն ալ առաքիւ

նի ու հայրենասէր կ'ըլլային և այն: Պէտք չէ կ'ըսեմ ասանկ արտասուց մը տաճարն մը ընել. փան զի, հարուստներուն ու վաճառականներուն մէջ առաքիւնի մարդոց անթիւ օրիւնակները ամէն տեղ ու մեր աղբին մէջ ալ տեսանք. թէ որ ուղեղն, գիտուններուն մէջն ալ կրնանք, անձնասէր, շահասէր ու աշխարհասէր մարդոց օրինակներ գտնալ: Յիշաւի շատ մեծ անտեղութիւն է այս կամ այն արհեստը կամ գործը մարդուս կրօնքէ, բարոյականէ կամ հայրենասիրութենէ պաղելու պատճառ սեպել. այլ է գիտութիւնը կամ հանձարը՝ այլ է բարոյական կրթութիւնը, այլ է հարուստութիւնը՝ վաճառականութիւնը, այլ է բարոյական կրթութիւնը: Սիւսիս տարբերութիւն կայ, որ ինչպէս որ մով գիտուն մը՝ ասի աղէտեմ աւելի վարպետութիւն կ'ընէ իր չարութիւնը, ասանկ ալ մով հարուստը՝ հասարակ աղբաւ մէկէ մը աւելի դիւրին ու աղբու կերպով կ'ընէ իր գէշութիւնները:

Սիւսեալը հիւսիս-արեւմուտէն: Ե. Ս. ԶՕԲԱՅԵԱՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄ

— Սամալիայի Դուրաթեալը մը կայ ծախսոր ունի 5 սենեակ, 2 խոլ-մայա, սառնարճ ու մէկ յիւս-ախոռ, 400 կանգոն ճախոռ-պարպիւլ և այլ քան մը բոլոր պէտքեղածները:

Յիշեալ եալն 400 կանգոնի վայ զիւս-ախոռ է, երեսն ալ 8 կանգոն է:

Ով որ կ'ուզէ այս գեղեցիկ եալն ծախս առնել, իւր երկայն եօղլէն խանը թուրքական արգոյ Պիլգոր աղան գտնայ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼԱՐԳՐԻՍ

Միլիոն Լալիս:

Ի Պիլի նոր խան:

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՈՒՀԱՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԵԱՆ